



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ԽԱՉԿԵՐԱՅ
15 ՍԵՂՏԵՄԲԵՐ 2024

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ	1
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	էջ	3
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 22)	էջ	4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԹԷՆ (49.13-23)

Ուրախացի՛ր երկինք, ցնծա՛՛ երկիր, ուրախաձայն աղաղակեցէք, ո՛վ լեռներ, Տիրոջ արդարութիւնը պատմեցէք, ո՛վ բլուրներ, որովհետեւ Տէրը իր ժողովուրդին ողորմեցաւ եւ իր ժողովուրդին խոնարհները մխիթարեց: Երուսաղէմի ժողովուրդը կ'ըսէր. «Տէրը զիս լքեց ու մոռցաւ»: Բայց Տէրը կ'ըսէ. «Միթէ մայր մը կրնա՞յ իր դիեցուցած զաւակը մոռնալ, կամ իր որովայնէն ծնած երեխային չզլթալ. բայց նոյնիսկ եթէ այդպիսի մայր մը գտնուի, ես քեզ պիտի չմոռնամ բնաւ: Տե՛ս, ահա, քեզ ամբարձար մէջ նկարեցի, եւ աւերակ պարիսպներուդ պատկերը միշտ աչքիս առջեւ է: Շուտով զաւակներդ կը վերադառնան, մինչ քեզ քանդողներն ու աւերողները կը հեռանան: Շուրջդ նայէ եւ տե՛ս, արդէն զաւակներդ կը հաւաքուին ու քեզի կու գան: Եւ ես, կենդանի Աստուածս, կ'ըսեմ. անոնք

քեզ պիտի ծածկեն պատմուճանի պէս եւ անոնցմով պիտի զարդարուիս հարսի պէս: Աւերակներդ եւ քանդուած ու կործանած քաղաքներդ շուտով նեղ պիտի գան բնակիչներուդ համար, եւ քեզ հարստահարողները պիտի հեռանան: Օտարութեան մէջ կորսուած զաւակներդ պիտի դառնան եւ ըսեն. «Այս տեղը նեղ է մեզի, տեղ տուր որ բնակինք»: Եւ դուն ինքնիրենդ պիտի խորհիս. «Ասոնք ո՞վ ծնաւ ինծի. չէ՞ որ անզաւակ եւ այրի մնացի երբ զաւակներս աքսորուեցան ու պանդխտացան, զիս մինակ թողլով. արդ ուրկէ՞ եկան եւ ո՞վ մեծցուց զանոնք»»: Տէր Աստուած այսպէս կ'ըսէ. «Ահա ես փրկութիւնս հեթանոսներուն վրայ պիտի տարածեմ եւ իմ նշանս ժողովուրդներու մէջ պիտի կանգնեմ. անոնք զրկած պիտի բերեն քու զաւակներդ, իրենց ուսերուն վրայ պիտի բերեն քու դուստրերդ: Թագաւորներ քեզ պիտի որդեգրեն ու թագուհիներ քեզ պիտի սնուցանեն. մինչեւ գետին խոնարհելով քեզի պիտի երկրպագեն ու ոտքերուդ փոշին պիտի լիզեն, եւ պիտի գիտնաս թէ ե՛ս եմ Տէրը. ինծի ապաւինողները երբեք ամօթով պիտի չմնան»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(6.14-18)

Գալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարեւորը մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր՝ անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր՝ անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբով թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վէրքերուն սպիւները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(3.13-21)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.՝ «Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց

անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա'յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ զրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ Որդիին չհաւատալուն համար:

«Եւ Դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

ՀՈԳԵՇԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՄ ԳՐԱՍԵՆԵԱԿ:
514 331 5445 x202 ԹԻՒՆ

Անդրադարձներ Եւ Խորհրդածույթիւններ

Մարկոս աւետարանիչ, նաեւ Մատթէոս եւ Ղուկաս աւետարանիչներ պատմած են Գալիլիոյ լիճին վրայ փոթորիկին դրուագը: Իւրաքանչիւր աւետարանիչի նկարագրութիւնը տարբերակ մըն է: Չանոնք տարբերակող տարրերուն եւ համագիրին (context) պիտի չանդրադառնամ այստեղ, այլ 2024-ի 1 Սեպտեմբերին համար աւանդուած հատուածներու անկիւնէն պիտի խորհրդածեմ Մարկոսեան դրուագին վրայ (4.35-41): ՄԷկ հատուածը Եսայի մարգարէն է (9.8-18), միւսը՝ Պօղոս առաքեալի Կորնթացիներուն գրած Բ. Նամակէն (1.1-11):

Իւրաքանչիւր անհատի կեանքը լիճ մըն է, որ թէ՛ սպասելիօրէն, եւ թէ՛ անսպասելիօրէն կրնայ փոթորկիլ: Իւրաքանչիւր համայնքի կեանքը լիճ մըն է. սա եւս թէ՛ սպասելիօրէն, եւ թէ՛ անսպասելիօրէն կրնայ փոթորկիլ: Մարկոսեան դրուագին մէջ, փոթորիկը կորսուելու վախը կ'արթնցնէ, եւ կորսուելու վախը կու գայ հաւատքի մէջ անհասունութենէն (ըստ Մատթէոսի՝ թերահաւատութենէն. ըստ

Ղուկասի՝ անտեղ հաւատքէն): Ինչ որ նոյն ատեն կը թելադրէ՝ թէ ամէն փոթորիկ կորուստ չի բերեր: Իսկ ի՞նչ հասկնալ փոթորիկով: Ըստ Եսայի մարգարէի, անիկա մեղքերու հովէն կը բարձրանայ: Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ անիկա ո՛չ միայն մեղքերու հովէն բարձրացողն է, այլեւ՝ հաւատաւոր յանձնառութիւններ իրենց վրայ փոթորիկ կը հրաւիրեն: Առաքեալի մտքին մէջ, փոթորիկը նշանակն է նեղութիւններու. նեղութիւններ կան՝ որոնք կու գան թէ՛ սեփական մեղքերու պատճառով, թէ ալ՝ այլոց մեղքերուն. նաեւ կան նեղութիւններ՝ որոնք կու գան, երբ հաւատաւոր յանձնառութիւնը չարչարակից կ'ըլլայ Քրիստոսի. չարչարակցութիւն մը՝ որ ընդհանուրի փրկութեան համար է: Այն չարչարակցութիւնը ի տարբերութիւն մեղքերէ պատճառուած նեղութիւններուն՝ աստուածային մխիթարութիւն ունի իր մէջ, անվախութիւն մը կամ արիութիւն մը, որուն վրայէն որեւէ փոթորիկ միայն կու գայ ու կ'անցնի...

ԳՔ

«ՆՈՐ ԾԱՂԻԿ»
ՄԱՆԿԱԴՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ
2024-2025 ՏԱՐԵՇՐԶԱՆ



«Նոր Ծաղիկ» Մանկապատանեկան երգչախումբը
իր փորձերուն կը վերսկսի Ուրբաթ, 4 Յոկտեմբեր 2024-ին:
Փորձերը՝ ամէն Ուրբաթ ժամը 4.30-5.45:
Վայր՝ Ս.Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Վերնատուն:
Խմբավար՝ տիկ. Գոհար Մանուէլեան:
Դաշնակահար՝ տիկ. Դայար Յարպոյեան-Գալլոյեան:
Արժանագրուելու համար ինքաձայնել՝
երեցկին Նինա Զիֆթեան-Գոյունեանին. 514-945-6174



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱԵՐ ԾԷՆՈՍԻԷՆ

Հեղինակ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹՎԱԳԱՆՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՍՈՒՏԵԱՆԻ

ՍԵՐԴ

Քաղցր ՏԵՐ, ցոյց տուր ինձի ազնուութիւնդ եւ քաղցրութիւնդ, դուն որ հեզ ես եւ սրտով խոնարի: Յաճախ ինքզինքիս կ'ըսեմ. «ՏԵՐը կը սիրէ զիս», բայց շատ յաճախ այս ճշմարտութիւնը չի թափանցեր սրտիս կեդրոնը: Իրողութիւնը, որ այնքան դիւրութեամբ կը նեղանամ յուսախաբութեան մը պատճառով, այնքան կը բարկանամ չնչին քննադատութեան մը պատճառով, եւ այնքան կ'ընկճուիմ նուազագոյն

մերժումի մը պատճառով, ցոյց կու տայ որ սերդ զիս տակաւին չէ պարուրած: Այլապէս, ինչո՞ւ, այնքան դիւրութեամբ հաւասարակշռութիւնս պիտի կորսնցնէի: Ի՞նչ կրնան մարդիկ ընել ինձի, երբ իսկապէս գիտեմ որ կը սիրես զիս, կը հոգաս ինձի, կը պաշտպանես, կը պահպանես, կ'առաջնորդես զիս եւ նեցուկ կը կանգնիս ինձի: Ի՞նչ կը նշանակէ փոքր - կամ նոյնիսկ մեծ - ձախողութիւն մը, երբ գիտեմ որ հետս ես՝ իմ բոլոր վիշտերուս եւ տուայտանքիս մէջ:

Բայց, դարձեալ ու վերստին, պետք է խոստովանիմ. թոյլ չեմ տուած որ սերդ միտքես ամբողջութեամբ իջնէ սրտիս մէջ, եւ թոյլ չեմ տուած որ գիտակցութիւնս անելով դառնայ ճշմարիտ եւ ամբողջական գիտութիւն՝ ամբողջ էութիւնս թափանցող:

Յառաջիկայ շաբաթներուն, ով ՏԵՐ, պիտի կարենամ նորէն տեսնել թէ որքան իսկապէս կը սիրես զիս: Թող որ այս շաբաթները ինձի պատեհութիւն դառնան ազատ արձակելու սիրոյդ նկատմամբ բոլոր դիմադրութիւններս եւ առիթ մը քեզի՝ զիս աւելի մօտ կանչելու: Ամէն: *(Շար. 22)*

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՈՒ ՏՕՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Շաբաթ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Երեկոյեան ժամը 7.00-8.00

Երգեցողութեամբ՝ Արական Երգչախումբին

